ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, կիրակի. - Ծաղկազարդ: Պահք:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Օվսաննա ի բարձունս, ալէլուիա, օրհնեալ, եկեալ անուամբ Տեառն, ալէլուիա» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 23):

Երեկոյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ Դոնբացեքի արարողություն:

Ապրիլի 5-ին, հինգշաբթի.- Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես աբեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի խոսքը:

Եռամիջօրեին, երեկոյան ժամերգությունից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց Ոտնլվայի կարգը:

Ուշ երեկոյան Մայր Տաճարում կատարվեց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Մատնության, Չարչարանքների և Խաչելության հիշատակության կարգը: Խորախորհուրդ այդ մթնոլորտում օրվա խորհուրդը մեկնաբանող քարոզ խոսեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը:

Ապրիլի 7-ին, շաբաթ. - Պահք: Ճրագալոյց Զատկի եւ Աւետումն Սուրբ Աստուածածնի:

Այսօր, առավոտյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբեղա Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Երեկոյան Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ապրիլի 8-ին, կիրակի. - ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 3):

Ս. Պատարագի վերջում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ապրիլի 15-ին, կիրակի. - Ը օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիւրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հոգի Տեառն ի վերա իմ, վասն որոյ եւ օծ իսկ Զիս, ավետարանել աղքատաց առաքեաց Զիս» (Ղուկ. Դ 18) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Ապրիլի 22-ին, կիրակի. - Գ կիր. Աշխարհամատրան (Կանաչ կիւրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ապրիլի 24-ին, երեքշաբթի. - ԺԷ օր Յինանց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

Ապրիլի 29-ին, կիրակի. - Դ կիր. (Կարմիր Կիւրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց: